

հատկանիշներով և գծերով:

5. Հայկական կուլմուլլատիվ ժողովրդական հեքիաթները մի շարք բնորոշ գծերով ու առանձնահատկություններով առնչվում են ինչպես հեքիաթների մյուս տեսակներին / կենդանական, կենցաղային, կախարդական/, այնպես էլ բանահյուսուության մյուս ժանրերին / տոպկ, անեկդոտ, երգ և այլն/: Հայկական կուլմուլլատիվ ժողովրդական հեքիաթների բազմաթիվ գույնգեղություններ կարելի է ցույց տալ աշխարհի շատ ժողովուրդների բանահյուսության մեջ:

Ռուզան Գրիգորյան

ԻՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԲԱՆԱՎՈՐ ԱՐՁԱԿՈՒՄ

1. Հայ ավանդական բանահյուսական սյուժեներին զուգահեռ, Գեղարքունիքի բնավոր արձակում զգալի տեղ են զբաղում հարևան ժողովուրդներից փոխառված վիպական սյուժեները/իրանական Ռոստամ Ջալը, քրդական Ապուսեթե Բնալալը, Շիրին Շահը, ԱլիՖն ու Էլեֆը, ինչպես նաև ադրբեջանական Զյոռոզլին/:

2. Ռոստամ Ջալ վեպի, ինչպես նաև իրանական վիպական զրույցների մասին հիշատակությունը հայ իրականության մեջ սկզբնավորվել է Մովսես Խորենացու, , Հայոց պատմությանը, , արձագանքվել XI դ. Գր. Մազիստրոսի, , Թղթեր, , -ում և ապա XIII դ. Կոստանդին Երզնկացու տաղերում:

3. Գրիգոր Մազիստրոսի, , Թղթեր, , -ում պահպանված իրանական վիպական զրույցներում կան այնպիսի մանրամասներ, որոնք չկան Ֆիրդուսու, , Շահնամե, , -ում: Այս հանգամանքը հաստատում է, որ Ռոստամին վերաբերող վիպական զրույցներն ավելի վաղ էին բանավոր ավանդույթ դարձել մեր իրականության մեջ, քան, , Շահնամե, , -ի հանդես գալն է:

4. Այդ ավանդույթը հարատևելով, հասել է մինչև մեր օրերը: Գեղարքունիքում իրանա-քրդական վիպերգերն ու վիպական զրույցները պատմվում են թե իբրև ամբողջական ստեղծագործություններ, և թե հատվածաբար՝ այլ հեքիաթներում ու զրույցներում: Այս մանապարհով էլ վիպական օտարամուտ սյուժեների տեղայնացման երևույթ է նկատվում Գեղարքունիքի բնավոր արձակում:

5. Իրանա-քրդական վեպերն իրենց արտաքին նկարագրով, գեղար-

վեստական ձևով արձակ պատմվածքի՝ հեքիաթի, զրույցի են նման, տեղ-տեղ հազեցած երգային շափածո հատվածներով, որոնք ասացողները կատարում են քրդերեն կամ աղբյուրներին լեզուներով:

6. Հայ բանահյուսության մեջ հնուց ի վեր իրանական վիպաշխարհի նկատմամբ եղած հետաքրքրությունը պայմանավորված է վեպերի ազատատենչ ոգով և համամարդկային զաղափարների հազեցվածությամբ, որով դրանք հոգեհարազատ են դարձել մեր ժողովրդին և այդ կերպ ստեղծվել է ,, Ռոստամ Զալ,, հայ-իրանական վեպը, որն ըստ էության առնչվում է ,, Սասնա ծռեր,, հայ ժողովրդական վեպի հետ:

Քամար Գևորգյան

ԼՈՒՈՒ ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆՆ
ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

/ ըստ հեղինակի գրառումների/

1. Տաս տարուց ավելի, մասնավորապես 1978-79թթ. գիտարշավների ընթացքում Լոռու-պատմա-ազգագրական շրջանում գրառած նյութը հնարավորություն է ընձեռում համեմատական քննության ենթարկելու բանահյուսական արդի փուլի պատկերն ըստ մի բանի հատկանիշների:

Ա. Բանահյուսության ժանրային կազմը հարուստ է վիպական, բանաձևային, դարձվածքաբանական առումով: Նվազ կենսունակ են քնարական բանահյուսության ծիսակենցաղային, հատկապես հարսանեկան երգերը: Քնարական բանահյուսությունից կենցաղավարում են համընթացման ծեսի հետ կապված շանգյուլումները:

Բ. Ավանդական ժանրերի գոյատևման հարցում առաջնությունը պատկանում է հեքիաթներին, առակներին, անեկդոտներին, ընաշխարհին ու պատմական դեմքերին վերաբերող ավանդություններին և սնահավատական գրույցներին:

Գ. Լոռու աշխարհագրական ողջ տարածքում, նույնիսկ առանձին գյուղերում նկատվում է ավանդական սյուժեների գոյատևումը, ինչպես նաև ավանդականի հիման վրա առաջացած տարբերակների առատությունը:

2. Հասարակական, քաղաքական տեղաշարժերի և առաջընթացի ազդեցությունը բանահյուսության արդի փուլում զգալի է: Հասարակական նոր հարաբերությունները, կենցաղը, նոր ըմբռումներն ու պահանջները աստիճանաբար դուրս են մղել հին կենցաղի ու կյանքի հետ կապ-